

663.2
Դ - 99

ՊՐՈՖԵՍՈՒՐ Ի. Ի. ՊՐՈՍՏՈՍԵՐԴՈՎ

ԻՆՉ ՊԵՏՔ Ե ԳԻՏԵԱԱ ԱՄԵՆ ՄԻ ԳԻՆԵԳՈՐԾ

Փոխադրեց Կ. Ա. Մելիք-Շահնշապարյան

— — —

ՀՐԵՍԵՐԵԿՈՒԹՅՈՒՆ „ՄԵՇԿԵԼ“ թ 864 „ԱՅԳՎԻՇԿՈՋԱԳԻ“ թ

ՏԵՐԵՎԱՆ Պ. Պ.

1928 թ.

26 393

ՊՐՈՖԵՍՈՒՐ Ի. Ի. ՊՐՈՍՏՈՄԵԴՈՎ


OCT 2010

663.2

Դ-99

ԻՆՉ ՊԵՏՔԵ ԳԻՏԵՆԱ
ԱՄԵՆ ՄԻ ԳԻՆԵԳՈՐԾ

Փոխադրեց Կ. Կ. Մելիք-Շահնշաղյան



ՅԵՐԵՎԱՆԻ ԱՅգեգործական ԿԱՅԱՆ

ՀՐԵՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ „ՄԵԺԴԱՆ“-Ի ՑԵԼ ՝ԽԳԳԻՆԿՈՂՈՎ“-Ի

Տ Ե Ր Ե Վ Ա Ն

1928 թ.

Հ. Ա. ՄԱՅՈՐԳԵԱՆ
Անդրեաս Մայորց
Պալատական բնակութան

ՀԱՅՈՒՆԵԳՐԱԾԻ 1 ՏՊԱՐԱ
ՊԱՏՎԵՐ № 306
ԳՐԱԿԱՐԱՎԱՐ 1065 Բ.
ՏԻՐԱԺ 3000

I. ԽԱՂՈՂԻ ՔԱՂԸ

Գինու հատկությունն ամենից առաջ կախումն ունի խաղողի ժամանակին քաղելուց։ Ժամանակից առաջ քաղած խաղողը գինուն անդուրեկան «զոգուուն» համ և տալիս, չատ թթու լինելուց և ավելի թույլ գինի յե սուացվում։ Ուշ քաղածը դժվար է յեփ գալիս, սուացվում և չատ թունդ և քաղցրավուն գինի։ Իսկ թունդ գինին ամեն ժամանակ ամենից լավը չի համարվում։ Ինչպես սեղանի գինի՝ նա ծանր է և ծարավությունը չի կոտրում։ Զափից ավելի հասունացած խաղողը, յերբ թփի վրա չամիչ և դառնում, լավ է, քաղցր, կամ այսպիս ասսած գեսերանի գինիների համար, ինչպիսին մուսկատ գինին է։

Խաղողի քաղը պետք է սկսել, յերբ նրա շաքարը և թթվությունը և դրանց հետ և մյուս նյութերը վորոշ հավասարակշռության են համում։ Թեև փորձված գինեգործը խաղողի արտաքին տեսքից և նրա համից կարող ե վորոշել խաղողի հասունության աստիճանը, բայց ավելի ճիշտ և պարզ կերպով կարելի յե վորոշել նրա քաղցրությունը առանձին գործիքով—շաքարաչափով,



Շաքարաչափ

Իսկ թթվությունը՝ վորոշ թնդությամբ, ալկալիի (մոլորանյութի) լուծվածք խառնելով։ Խաղողի միջի շաքարի

I. ԽԱՂՈՂԻ ՔԱՂԸ


Դիմու հատկությունն ամենից առաջ կախումն ունի խաղողի ժամանակին քաղելուց։ Ժամանակից առաջ քաղած խաղողը գինուն անդուրեկան «զոգուն» համ է տալիս, շատ թթու լինելուց և ավելի թույլ գինի յե ստացվում։ Ուշ քաղածը դժվար է յեփ դալիս, ստացվում է շատ թունդ և քաղցրավուն գինի։ Խոկ թունդ գինին ամեն ժամանակ ամենից լավը չի համարվում։ Խնչուս սեղանի գինի՝ նա ծանր է և ծարավությունը չի կոտրում։ Զափից ավելի հասունացած խաղողը, յերբ թփի վրա չամիչ է գառնում, լավ է, քաղցր, կամ այսպիս առած դեսերտի գինիների համար, ինչպիսին մուսկատ գինին է։

Խաղողի քաղը պետք է սկսել, յերբ նրա շաքարը և թթվությունը և դրանց հետ և մյուս նյութերը վորոշ հավասարակշռության են հասնում։ Թեև փորձված գինեգործը խաղողի արտաքին տեսքից և նրա համից կարող է վորոշել խաղողի հասունության աստիճանը, բայց ավելի ճիշտ և պարզ կերպով կարելի յե վորոշել նրա քաղցրությունը առանձին գործիքով—շաքարաչափով,



Շաքարաչափ

Խոկ թթվությունը՝ վորոշ թնդությամբ, ալկալիի (մոխրանյութի) լուծվածք խառնելով։ Խաղողի միջի շաքարի



Դանակ, բաղլակ, վեդրութեր, մոմկալ, լիվեր,
ծխտման, ձագառ.

և թթվության քանակը վորոշելը զժվար բան չե, ամեն
մի գրագետ կարող է գլուխ բերել:

Գործիքը կարելի յե ճեռք բերել Ալգդինկոսովի մի-
ջոցով, իսկ գործադրության մասին կարգալ փորձնու-
կան այլու կայարանի հրահանգը, վորը ձրի կուղար-
կեն: Իսկ կայարանում անմիջապես կարելի յե գործա-
ծության յեղանակը սովորել:

Խաղողի զանազան տեսակները միաժամանակ չեն
հասունանում, զրա համար ել այս ու այն տեսակը յերբ
մեծ տեղ ե բռնում, պետք ե քաղը առանձին առանձին
լինի: Պատրաստի գինիները կարելի յե հետո իրար իսու-
նել միանման գինի ստանալու համար: Քաղի ժամանակ
պետք ե ընարություն անել, այն ե՝ փոտած ու փչացած
միթերը հեռացնել:

2. ՇԻՐԱՆ ՅԵՎ ԳԻՆԻՆ

Խաղողի հյութը—այն ջրային քաղցրա-թթվային
հեղուկն ե, վորը գտնվում է պտուղների մեջ: Հյութը
մշակելու ժամանակ նրա հետ խառնվում են զանազան
նյութեր ձիթի պինդ մասերից—կեղեր, չանչը, սերմը:
Այդ հյութերի խառնուրդը և լուծվածքը ասլում ե շի-
րա: Հասկանալի յե վոր գինին զանազան տեսակ կլինի,
հայսած թե ինչ քանակությամբ և վորքան ժամանակ են
ձիթի այդ պինդ մասերը մնացել շիրայի մեջ: Գինեգոր-
ծը պետք ե զիտենա այդ մասերի կանոնավորելը, նը-
րանց գործադրությունը: Այսպես, զինու զույնը պտղի
կեղեր մեջն ե, կարմիր խաղողը իր կեղեր վրա յեփ
գալով, շիրան կարմիր գույն ե ստանում: Խակ, կանաչ
չափչը (քնիթենուը) գինուն տտագություն և կոշտություն

Ե տալիս , լավ ե գրանց հեռացնել , միայն մի մասը կարելի յե թողնել կարմիր զինվներ պատրաստելու համար : Ճերմակ գինի պատրաստելիս՝ նրանք վտանգավոր չեն , վորովհետեւ շիրան առանց չանչերի յե յեփ դալիս : Չանչը միայն ողնում , թեթևացնում և մամլեր :

Գինի պատրաստելու յեղանակները զանազան են , նայած թե ինչ աեսակ գինի յեն ուզում ստանալ : Կան աեղանի գինիներ , վոր գործ են ածում ամեն որ ճաշի ժամանակ , գրանք թեթև են , վոչ չատ թունդ և թթվությունը դուրեկան : Սեղանի գինիները լինում են ճերմակ և կարմիր :


Կան և թունդ գինիներ , վոր ավելի յեն թնդացնում գինու սպիրտ խառնելով : Այլպիսիներն են մաղերը , սորտիյնը , խերեսը : Կան և քաղցր գեսերտի գինիներ , վորոնց միջի չափարը պահում են , որինակ մուսկատ կամ վենդերական գինին : Վերջապես կան փշիչան , գրփրող գինիներ , ինչպիսիք են Դոնի և Յիմլանի չամպայն գինիները :

Ամեն աեղ պետք ե այն գինին պատրաստել , վորը ամենից շատ և տեղական պայմաններին համապատասխանում , որինակ վորտեղ կարելի յե սեղանի թեթև գինի ստանալ կամ լավ թունդ և գեսերտնի :

3. ԽԱՂՈՂԻ ՎԵՐԱՄՇԱԿՈՒՄԸ


Մեղանում շատ գեպքերում խաղողը ջարդում են վոտներով : Յեթե այդ կանոնավոր ու մաքուր կերպով կատարվի , այդ մեղանակը վատ չե , բայց միայն վոտով կոխ տալը , ջարդելը բավական չե . վորպեսզի խաղողից գորչափ կարելի յե շատ հյութ ստացվի , պետք ե և ժամանել : Այժմ կան աժանագին փոքրիկ մամուլներ լր-

ծակներով և պառատակներով , վորոնք շատ հարմար են փոքրիկ տնտեսությունների համար (ա . պատկեր) , լավ



Մամուլ

ուժեղ մամուլ ունենալուց , կարիք չկա վատով ջարդելուն : Իսկ խաղողի ջարդելն ավելի հարմար ե ջարդող մեքենայի միջոցով կատարել , վորտեղ խաղողը ընկնելով յերկու միմիանց գեմ պատվող գլանակների մեջ , ջարդվում թափվում է : Կան և ջարդող և միաժամանակ չանչահան անող գործիքներ : (Տես պատկեր) : Փոք-



Ջարդող գործիք

բիկ տնտեսություններում խաղողի ջարդելը կարելի յէ կատարել և վայրի ծակոտկեն քամիչի մէջոցով, վորի յերեսին փոելով և ձեռքով տրոբելով, հյութը թափ-գում և, իսկ չանչը մնում յերեսին :

4. ՇԻՐԱՅԻ ՅԵՓ ԳԱԼԸ

Գինեշնության մեջ շիրայի յեփը ամենադլխավոր գործողությունն է, նրա հաջողությունից ե կախված գինու հատկությունը և դուրեկան լինելը : Շիրայի յեփ գալուց, վորը նման է հեղուկների յեփ գալուն, նրա միջի շաքարը փոխարկվում է սպիրոֆի և ածխաթթու գազի : Շաքարի 1 տոկոսը տալիս ե մոտավորապես $\frac{1}{2}^{\circ}$ (դրառուա) սպիրո ըստ ծավալի : Այսպես գինին կարող է 10 աստիճան ունենալ 17 տոկոս շաքարահյութի ժա-ժանակ և 11,8 ասու . յերբ 20 տոկ. շաքար ե ունենում :

Սովորաբար շիրայի խաչը (մերանքը) չի կարող 17-18^o ավելի սպիրո առաջ բերել և այդ բացառիկ դեպ-քերում : Ածխաթթու գալը (այն, վոր գոյանում և մեր չնչառության ժամանակ, նույնպես և մի բան վառվե-լուց) դիմուց մեծ մասմբ դուրս և գալիս ինքնիրեն : Փրփռուն գինի պատրաստելուց, այդ գազը զիտմամբ պահում են : Ածխաթթու գաղի ներկայությունը շիրա-տանը կամ տակառի մեջ կարելի յէ հեշտ խմանալ, յերբ վառած մոմը կամ լուցկին իսկույն հանդչում և յերբ մոտեցնում ենք : Այդ գազը մեծ քանակությամբ շինու-թյան մեջ հավաքվելուց կարող ե մարդի չնչառությունը կտրել, մինչև անգամ խեղզել : Դրա համար ել շիրա-տունը պետք ե քամհար լինի, ողանցք ունենա :

Խաղողի չափարի, սպիրոֆի և ածխաթթուի փոխ-վելք հասարակ աչքով չի կարելի տեսնել, մանրագի-

տակով միայն կարելի յէ նկատել մանր սունկեր—խա-չի (մերանքի) սաղմերը : Առանց դրանց շիրան յեփ չի դալ, դրանք հեշտ են մտնում են շիրայի մեջ, դրանք անթիվ քանակով դանդում են թե պտուղների յերեսին և թե ողի մեջ, ինչպես անտեսանելի մանրեներովառքն :

Խաչը—կենդանի արարած ե, նրանք չեն սուզվում, այլ աճում և բազմանում են : Շիրայի յեփը լավ գնալու համար պետք է մերանքի սունկերի կանքը լավ պայ-մաների մեջ դնել : Նրանց համար խաղողի շիրայի մեջ շատ սննդարար նյութեր կան, բայց թթվության պա-կառությունը յեփ գալու վրա վատ ե անդրագառնում : Շատ քաղցր լինելուց ել (25^o բարձր) յեփ գալը նույն-պես դժվարանում է : Նրանց համար շատ յավ և 20-30^o տաքությունը :

Շիրան լավ ե յեփ գալիս, յերբ խառնում են, վոր ողը մտնի ներսը, վարովհետեւ ողը ոգնում է մերանքի սաղմերի շատանալուն :


Յեփ գալուց, բայց սպիրուը, քիչ քանակությամբ և ուրիշ շատ նյութեր ել են առաջ գալիս, վորոնք աղ-դում են գինու համի և հոտի (բուկետի) վրա :

Այս վերջին ժամանակներում բացի ողից խաղողի շիրայի մեջ պատահարար ընկնող մերանքը, գինեգոր-ծության ժամանակ ոգտվում են և ընտիր մերանքով, վորը ձգելով շիրայի մեջ, թե լավ ե յեփ բերում և թե հեշտ պարզեցնում :

Յեփը սկզբում շատ ուժեղ ե լինում, բայց դրանից հետո սկսում է մեղմ յեփը, վորը քիչ նկատելի յէ և հետզհետեւ գնալով կտրվում է : Յեփ տալու համար ծա-ռայում են կաղնի փայտից շինած տակառները և տա-քարները (չաները), կարասների մասին այստեղ խոսք

չի լինիլ, վարովէետե այդ ամանները այնքան նպաստակահարմար չեն, մասավանդ թունդ գինիների համար:

Ինչպես ասված է, կարմիր գինիների համար շիրանյեփ և զալիս իր ճանձի հետ (լալ և վոր առանց չանչի լինի կամ մի մասը հեռացրած): Ամելի հարմար և շիրան կաղնու տախտակներից շինած չաների մեջ յեփ տալ: Չանի յերեսը ընկած ճաճան, վորին «փափախ» են ասում, պետք և ժամանակ ժամանակ շլրայի մեջ մըտցնել փայտի խառնիչով: Չաները շինում են յերկու ծակոտկեն հատակներով, վորոնց արանքում տեղավորում են ջարդված խաղողը, վերևից և ներքևից վլրայսվ շրջապատված: Եթում են և բոլորովին ծածկված, փակ չաներ:



Քան


Եթրան չաների մեջ թողնում են կամ մինչեւ նրա յեփի կատարյալ վերջանալը կամ հանում են և առաջ, ցանկացած գույնը ստանալու համար: Կարմիր գինիների կանոնավոր յեփ զալը շարունակվում ե 4-6 որ:

Ճերմակ գինիների համար խաղողը մամլում են իւնց չորմէերով: Եթրան ածում են տականները վերելից

մի քիչ տեղ թողած առանց լցնելու, այդտեղ ել նա յեփ և զալիս: Ոգտակար ե, յեթե շիրան յեփ տալուց առաջ թողնում են ծխած տակառի մեջ և հետո հանելով ուրեց տակառ փոխադրում յեփ տալու: Ինչպես ճերմակ, այնպես ել կարմիր գինիների միջի բոլոր շաքարը պետք է աշխատել, վոր վերամշակվի: Յերբ յեփ զալիս դեռ շաքար և մնում մեջը, նա ոգնում է դինու մեջ հիվանդություններ զարգանալուն:

Թունդ գինիներ շինելիս սովորում են խառնում, յերբ նրա մեջ ուղած քանակով շաքարի տոկոս և մնում: Սովոր խմելու համար պետք և բացառապես խաղողի մաքուր սովորա լինի, վոչ սովորա քան 90°-ի: Եթրային սովոր են խառնում մինչեւ 17-18°. իմանալու համար թե վորքան սովոր պետք և ամելացնել ցանկացած թընդությունը ստանալու համար, կարելի յե ոգտվել «ասուղիկով»:

Յենթաղրենք վոր մեր գինին 13° (ասուղիճան) թընդություն ունի և ունենք ճեռքի տակ 90°-ի սովորում. պահանջվում է թնդությունը 18°-ի հասցնել: Այդ թվանը շաները մենք աստղիկի ձևով դասավորում ենք և հանում 90°-ից 18° և 18°-ից 13°. աստղիկը այդ ժամանակ հեռայալ տեսքն և առնում:



Իսկույն յերեսում ե, վոր 18° գինի ստանալու համար պետք է 72 վեզրին մեր 13° գինուն վերցնել 90°-ի 5-

վեղրա սպիրտ : Այլտեղից և կարելի յե հաշվի առնել դինու ուղած սպիրտի քանակը :

5. ԱՄԱՆԵՐԻ ԽՆԱՄՔԸ ՅԵՎ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԱՔՐՈՒԹՅՈՒՆԸ

Գինեշինության մեջ ամենից գլխավորը մաքրությունն է : Գինեշինությունից առաջ պետք է նայել և մամուլի, ջարդող գործիքի, տակառների, չաների պակասությունները ուղղել : Գործիքների մետաղյա մասերը պետք ե մոխրով մաքրել և չոր չորով սրբել, պըտուտակին մեքենական յուղ քսել, փայտելեն մասերին տաք ջրի մեջ լուծած սողա կամ մոխրաջուր ածել վըրձինով քերել, մաքուր ջրով լվանալ և արել տակ չորացնել : Տակառները պետք ե նորոգված լինեն և առողջ : Առողջ են տակառները թե վոչ, կարելի յե իմանալ նրանց հոտից :

Նոր տակառները գինեշինությունից յերկու շարաթ առաջ մաքուր ցուրտ ջրով լցնում են և որը մեջ փոխում : Դրանից հետո տակառները մոտ կես ժամ յեռացած ջրով լվանում : Դրա համար տակառի մեջ յերկու յերեք վեղրա յեռացած ջուր են ածում, խցանով ծածկում և ուժեղ թափահարելով դանդաղ վոլորում :

Յեռացած ջուրը փոխում են մի քանի անգամ : Պետք է չըի տաք ժամանակը թափել տակառը, ապա թե վոչ տակառի տախտակների մեջ վնասակար նյութեր կծծվեն : Հետո տակառները մի քանի անգամ ցուրտ ջրով լվանում են և քամ դնում : Մանր աժմանները բոլորովին մինչև զլուխը յեռացրած ջրով լցնում :

Յեթե ուղում են, վոր տակառը չուտ պատրաստի, ապա ջրով լցնում են, մեջը սողա ձղած (500-600

գրամ մի վեցրո ջրին) կամ մոխրաջուր (3-4 վեղրո), հետո շրջշրջում են, և դիք դնում փափոխելով 15 րոպեկ թողնելով : Դրանից հետո յեռման ջրով լվանում են, շրջշրջում, ցուրտ ջրով վողողում և քամ դնում :

Հին տակառները յեթե բորբոսած են, քացախի հոտ են փշում, հանում են ճակատի տախտակները, թրջում, վրձինով քերում, կեծ ջրով վողողում, լվանում : Սաստիկ քացախի հոտ փշող և բորբոսած տակառները մաքրելու համար, նախապես նրանց մեջ վազի վառած կարոններ են ձգում, վորից տախտակները խանձվում են և հետո քերում :

Յերբ ճերմակ գինեշիների համար տակառների պակասություն և լինում, գործադրում են կարմիր գինեների տակառները յեռացրած թունդ սողաջրով լվանում (2 քիլո սողա 2 վեղրա ջրին) :

Տակառները քամ դնելուց և չորացնելուց հետո՝ ծծումբով ծխում են գինեշինությունից յերկու շարաթ առաջ : Դրա համար պատրաստում են ծծմբային պատրույթներ, վորը լինում են բարակ թղթից, 30 սանտիմետր յերկար և 3 սանտիմետր լայն . այդ թղթերը խրում են կաթսայում հալեցրած ծծումբի մեջ, իսկաւյն հանում, թողնում, վոր ավելորդ ծծումբը ծորի և չորացնում թոկից կախելով : Ծծմբաթուլթը վառում են և լարի ծայրը անցրած տակառի բերանից կախում ներս : Կան և ծխելու համար հատուկ ծխամաններ, վորի մեջ թափվում և չայրված ծծումբը (տես պատկերն) :

Եիրատունը պետք ե մաքուր լինի և ոգափոխության հարմարություններ ունենա : Նրա մեջ չպետք և մնային այս ու այն մթերք պահել, մանավանդ քացա-

խը, կերոսին, և նման մթերքներ, վորովհետի գինին
հեշտին և կողմնակի հոտերը վերցնում:

6. ԳԻՆԻՆԵՐԻ ԳԼԽՆԵՐԸ ԼՑՆԵԼԸ ՅԵՎ ՅԵՏ ԱՇԵԼԸ

Յերբ մեղմ յեփը վերջանում է, գինին պետք է
դիրտից հեռացնել: Յեփ զալուց հետո տակը նստած
մերանքը վոչ միայն պետքական չե, այլ և նա վնասա-
կար է, վորովհետև լուծվելով փչացնում և պղտորում
էն գինին:


Առաջին տարին դիրտից հանած գինին փոխադրում
յետ են ածում յերեք անգամ, առաջին անգամը դեկ-
տեմբերին, յերկրորդ անգամը դարնանը (մարտին) և
յերրորդ անգամը՝ աշնանը: Յետ ածելիս պետք է աշ-
խատել գինին չպղասորվի, ավելի հարմար է սիփոնով
կամ ծորակ զնելով փոխադրելը:

Տակառը գինով բոլորովին լցնելուց հետո բերանը
խցանով պինդ ծածկում են:

Գինին տակառում պահելուց, չնայելով վոր բե-
րանը պինդ ծածկված է լինում, իր ծավալը պակա-
սեցնում է չնորհիվ տակառի տախտակների միջոցավ
զոլորշիանալուց: Խցանի տակը զատարկ մնալուց ողով
լցվում է, իսկ ողը նպաստում է գինու բորբոսի և
քացախելու դարպացման:

Գինու փչանալու առաջն առնելու համար՝ միջա-
տակառը լցրած են պահում և վորչափ հնարավոր է
միենուն գինուց խառնում: Գլխները լցնելու համար
գինին կարելի յե շիշերով կամ չետվերտներով առան-
ձին պահել: Առաջին շաբաթներում զլուխը պետք է
լցնել ամեն յերկու որից, հետո շաբաթը մի անգամ և

գնալով ավելի ուշ: Գլուխը լցնելու համար հարմար է
փայտե լեյիան, յերկար ծորակով (ու պատկ.):



Լեյիան

7. ԳԻՆԵՏԱՆ ՊԱՐԱՊՄՈՒՆՔԸ

Գինին գինետուն փոխադրով վերջանում է դի-
նեշինությունը և սկսվում գինետան մյուս պարապ-
մունքները: Գինիները պարզվում են և իրենք իրենց
ժաքրվում, ինչպես վոր այդ կատարվում է գինեգործի
միջոցով, յերբ անց և կացնում նա ֆիլտրով կամ զր-
տում այս ու այն նյութերով:

Տակառներում պահելուց հետո գինիները լցնում
են շիշերը, վորոնց մեջ միայն կարաղանում են իրենց
լավ հատկությունները զարգացնել:

Գինեգործը պետք է հետեւ, վոր գինու մեջ զա-
նագան հիվանդություններ չառաջանան, ինչպես որի-
նակ քացախային թթվությունը:

Ավելի հեշտ և հիվանդանալուց գինին պաշտպա-
նելը, քան նրա բժշկելը:

Կանոնավոր գինեշինությունը և նրա ուշադիր
ինամքը գինուն ավելի դիմացկան և շինում թե հի-

վանդանալու դեմ և թե տեղափոխելու վառանգիւ Այդ-
ովիսի գինիները մեր գյուղատնտեսության արդյունա-
բերության ճանապարհը կրանան և յերկրի բարեկե-
ցության կնպաստեն :



«Ազգային գրադարան



NL0297441

26. 09.3

ԳԻՆԸ 15 ԿՈՊ.